ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 03.10.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/36

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի 13.09.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 13.09.2017թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Համաձայն «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության 1.5.1 կետի, «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը մերժվել են էլեկտրոնային ստորագրության բացակայության պատճառով:

Հայտնում ենք, որ էլեկտրոնային ստորագրություններն առկա են բոլոր անհարժեշտ փաստաթղթերի վրա: Համաձայն ՀՀ էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին օրենքի՝ էլեկտրոնային թվային ստորագրությունը դա էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և

էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն է, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին ներկայացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից և աղավաղումներից պաշտպանելու համար:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով նշված «արտատպման» բացակայությունը չի կարող հանդիսանալ հիմք մերժելու մեր կողմից ներկայացված հայտը: Համաձայն ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության կարիքների համար «Գործարքների իրականացման և պատվերով ծրագրային ապահովման մշակման ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման հրավերի 8.9 կետի՝ տվյալ արտատպման բացակայությունը կարող էր հանդիսանալ ընդամենը անհամապատասխանություն, որի շտկման համար պետք է տրվեր ժամանակ:

Համաձայն վերոհիշյալ օրենքի 2-րդ գլխի 4-րդ հոդվածի՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Մեր ընկերության կողմից փաստաթղթերի ստորագրված լինելու փաստը հաստատելու համար, տվյալ փաստաթղթերը կարող են ներկայացվել ՀՀ-ում միակ հավատարմագրված հավաստագրման կենտրոն՝ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն»:

Ելնելով վերագրյալից, ինչպես նաև այն հանգամանքից, որ 1-ին չափաբաժնի համար «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված գինը ամենացածրն է և տարբերվում է հաջորդ գնից մոտ 40%-ով, Ընկերությունը քողոքով խնդրել է՝ չեղյալ համարել հանձնաժողովի նիստի արձանագրությունը և որոշումները, 1-ին և 2-րդ չափաբաժինների համար հաղթող ճանաչել «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ին:

Խորհրդում բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի տնօրեն Արամ Մխիթարյանը:

2. <u>ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 15.09.2017թ. թիվ ՄՄ/ԵՋ-1/144226-17 գրությամբ «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի կողմից 13.09.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության կարիքների համար «Գործարքների իրականացման և պատվերով ծրագրային ապահովման մշակման ծառայությունների» ձեռքբերման նպատակով 04.09.2017 թվականին գնանշման հարցման ձևով «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/6» ծածկագրով հայտարարվել է գնման ընթացակարգ: Մրցույթի հայտերը բացվել են 2017թ. սեպտեմբերի 11-ին, և հայտ ներկայացրած մասնակիցներից «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի հայտերը մերժվել են, քանի որ ներկայացված բոլոր փաստաթղթերում՝ արտատպման դեպքում բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը: Հայտի մերժման հիմք է հանդիսանում ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին ընդունված 526-Ն որոշման հավելված 1-ի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, համաձայն որի հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Ինչպես նաև նույն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի 12-րդ ենթակետը, համաձայն որի տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա:

Կից Ձեզ ենք տրամադրում «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/6» ծածկագրով մրցույթի հրավերի տեքստը, բացման նիստի արձանագրությունները, շահերի բախման մասին հայտարարությունը և «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Աննա Տրդատյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2017/36 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի կողմից 13.09.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, բողոքի վերաբերյալ Պատվիրատուի 15.09.2017թ. թիվ ՄՄ/ԵՋ-1/144226-17 գրությամբ ներկայացված դիրքորոշումը, «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/6» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 13.09.2017թ. նիստի թիվ 2 արձանագրությունը, «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգին ներկայացված հայտի պատճենը, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության կարիքների համար «Գործարքների իրականացման և պատվերով ծրագրային ապահովման մշակման ծառայությունների» ձեռքբերման նպատակով 04.09.2017թ. armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտարարվել է «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը 13.09.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1.5.1 կետով որոշել է «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի հայտը մերժել այն հիմնավորմամբ, որ բոլոր փաստթղթերում բացակայում է էլեկտրոնային թվային ստորագրությունը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետը:

«Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված բոլոր փաստաթղթերի վրա առկա են էլեկտրոնային թվային ստորագրությունները, ընդ որում, Ընկերության կողմից փաստաթղթերի ստորագրված լինելու փաստը հաստատելու համար, տվյալ փաստաթղթերը կարող են ներկայացվել ՀՀ-ում միակ հավատարմագրված հավաստագրման կենտրոնին՝ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին:

Բողոքի քննության նպատակով 19.09.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության տնօրենը պնդեց 13.09.2017թ. բողոքով հայտնած դիրքորոշումն այն մասին, որ Ընկերության հայտում ներառված բոլոր փաստաթղթերը պատշաճ ստորագրված են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հետևաբար, Հանձնաժողովի կողմից նշված՝ 13.09.2017թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1.5.1 կետով «Հելիքս Կոնսալտինգ»

ՍՊԸ-ի հայտը մերժելու հիմնավորումը, ըստ որի՝ Ընկերության բոլոր փաստաթղթերում էլեկտրոնային թվային ստորագրությունը բացակայում է, չի համապատասխանում իրականությանը, ուստի և Հանձնաժողովի գործողություններն այդ մասով իրավաչափ չեն: Ընկերությունը գտնում է, որ իր կողմից ներկայացված հայտը համապատասխանել է ընթացակարգի հրավերի պահանջներին:

Պատվիրատուի ներկայացուցիչն ընդունեց այն փաստը, որ «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի փաստաթղթերում էլեկտրոնային թվային ստորագրությունը առկա է՝ միաժամանակ նշելով, որ Ընկերության հայտը մերժելու որոշումը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ վերջինիս հայտով ներկայացված փաստաթղթերը (այդ թվում՝ գնի առաջարկը և հայտի ապահովումը) չեն համապատասխանել Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով և Հրավերի 8.19 կետով սահմանված՝ էլեկտրոնային ստորագրության արտատպման՝ փաստաթղթի վրա տեսանելի լինելու պահանջին: Ուստի, ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով, որի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան՝ Հանձնաժողովը որոշել է «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և նույն օրենքով նախատեսված ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերը, բացառությամբ նույն հոդվածի յոթերորդ մասով նախատեսված դեպքերի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ):
- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի՝ 4-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր

ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը (...):

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 3-րդ համաձայն՝ էլեկտրոնային ձևով գնումների կատարման դեպքում գործում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները՝ հաշվի առնելով նույն կարգով սահմանված առանձնահատկությունները:

Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ (...):

«ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/6» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 8.19 կետի համաձայն՝ Հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից նույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային

թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Խորհուրդն արձանագրում է, որ «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ն իր կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը սահմանված կարգով հաստատել է Ընկերության էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Հաշվի առնելով, որ էլեկտրոնային ձևով գնումների կատարման դեպքում գործում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները, ինչպես նաև այն, որ էլեկտրոնային ստորագրությամբ պաշտպանված փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունն ըստ էության ապահովել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ որպես ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի, 30-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Հանձնաժողովը Ընկերության հայտը մերժել է հայտում ներառված բոլոր փաստաթղթերում էլեկտրոնային թվային ստորագրության բացակայության հիմնավորմամբ:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ Ընկերության կողմից «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին ներկայացված հայտը էլեկտրոնային թվային ստորագրության բացակայության հիմնավորմամբ մերժելով՝ գործել է ոչ իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի կողմից 13.09.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Դադարեցնել «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.09.2017թ. նիստի թիվ 2 արձանագրության 1.5.1 կետով ընդունված՝ «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ